

Հավելված

Պաշտպանության նախարարի 2018 թվականի
«01» օգոստոսի N 797-Լ հրամանի

ԿԱՐԳ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են պաշտպանության նախարարի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի (այսուհետ՝ նորմատիվ հրաման) հաշվառման և պահպանման հետ կապված հարաբերությունները: Սույն կարգի գործողությունը տարածվում է նաև օրենքով սահմանված կարգով համատեղ ընդունված նորմատիվ հրամանների վրա:

2. Նորմատիվ հրամանների հաշվառումն իրականացնում է պաշտպանության նախարարության աշխատակազմը՝ միաժամանակ փաստաթղթային և էլեկտրոնային գրանցամատյանի վարման միջոցով:

3. Նորմատիվ հրամանների հաշվառման գրանցամատյանում ըստ հերթականության նշվում են՝

- 1) նորմատիվ հրամանի հաշվառման հերթական համարը.
- 2) նորմատիվ հրամանի վերնադիրը.
- 3) նորմատիվ հրամանի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը.
- 4) նորմատիվ հրամանի հերթական համարը՝ արաբական թվանշաններով և «Ն» (նորմատիվ) տառի նշումով.

5) նորմատիվ հրամանի վերաբերյալ պետական-իրավական փորձաքննության եզրակացություն տալու տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը.

6) նորմատիվ հրամանը պաշտոնական հրապարակման ուղարկելու գրության տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, համարը.

(6-րդ ենթակետը խմբ. ՀՀ ՊՆ 06.04.2023թ. N 453-L)

7) նորմատիվ հրամանի գործողության դադարեցման ակտի տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, համարը:

4. Նորմատիվ հրամանների հաշվառման գրանցամատյանում հաշվառման համարների հերթականությունը վերսկսվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից:

5. Նորմատիվ հրամանների հաշվառման փաստաթղթային գրանցամատյանը վարվում է առանձին գրքով, որը կարվում է և էջերը համարակալվում են, թերթերի թիվը հաստատվում է պաշտպանության նախարարության աշխատակազմի կնիքով: Փաստաթղթային գրանցամատյանում գրառումները կատարվում են գրիչով, առանց կրճատումների և ջնջումների, պարզ ու ընթեռնելի ձեռագրով:

6. Նորմատիվ հրամանները հաշվառումից հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում տեղադրվում են պաշտպանության նախարարության պաշտոնական կայքում:

7. Նորմատիվ հրամանների բնագրերը պահպանվում են անժամկետ, իսկ նորմատիվ հրամանների հաշվառման գրանցամատյանի պահպանումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի ապրիլի 4-ի N 397-Ն որոշմամբ հաստատված կարգով և ժամկետներում:

(7-րդ կետը խմբ. ՀՀ ՊՆ 06.04.2023թ. N 453-L)